

ՀԵՌԱՎԱՐ ԵՎ ԽԱՌԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Եվրասիա միջազգային համալսարան
Որակի ապահովման կենտրոն

ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԵՄՀ ՀԵՌԱՎԱՐ ԵՎ ԽԱՌՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
Փաստաթղթի N	ԵՄՀ/ՁԿ-ԿԳ-03-01
Հաստատման ամսաթիվը	27.05.2020
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող /պաշտոն, անուն, ազգանուն/	Աշխատանքային խումբ
Ներդրման /իրականացման պատասխանատու	Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր/ Ամբիոնների վարիչներ

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոփ. N	Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն Ստորագրություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 4
2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ 4
3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 5
4. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՐԹԱԿՆԵՐ 5
5. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 6
6. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ 9
7. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 9
8. ՈՐԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ 11
9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 13
Հավելված 1. Microsoft Teams հարթակի ԵՄՀ համար հասանելի հնարավորությունների փաթեթ 13
Հավելված 2. Microsoft Teams հարթակի կիրառման ցուցումներ ուսանողների համար 14
Հավելված 3. Գնահատման այլընտրանքային մոտեցումներ 15

1. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1. Ուղեցույցում շարադրված են Եվրասիա միջազգային համալսարանում (այսուհետ՝ ԵՄՀ) հեռավար և խառը ուսուցման գործընթացի կազմակերպման և իրականացման մեթոդական և կառավարչական պահանջներն ու ցուցումները:

1.2. **Ուղեցույցի նպատակներն են՝**

- խթանել տեղեկատվության և հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը կրթական գործընթացում՝ կրթության որակի բարելավման նպատակով;
- նպաստել ուսումնական գործընթացի անհատականացմանը և ուսումնական պլանների կիրառման ճկուն համակարգի ներդրմանը՝ նպաստելով սովորողների ինքնուրույն աշխատանքի բարելավմանն ու որակի բարձրացմանը;
- հեռավար ուսուցման գործընթացի կողմերին (վարչական/ ուսումնաօժանդակ աշխատակիցներ, դասախոսներ և ուսանողներ) տրամադրել համապարփակ տեղեկատվություն և ուղղորդել վերջինիս կազմակերպման շուրջ՝ ապահովելով բուհի ներքին որակի ապահովման մեխանիզմների անխափան իրականացումը:

2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Ուղեցույցում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

- **Հեռավար (դիստանցիոն) ուսուցում** - գործընթաց, որի ժամանակ ԵՄՀ դասընթացները (ամբողջությամբ կամ դրանց հիմնական մասը) իրականացվում են ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառմամբ:
- **Օֆլայն /Land-based/ ԿԾ (25%–)** - կրթական ծրագիր, որի կրթական բաղադրիչների միայն մինչև 25%-ն է ուսանողի կողմից կուտակվում ԵՄՀ հեռավար ուսուցման նպատակով կիրառվող կրթական տեխնոլոգիաների միջոցով:
- **Առցանց ԿԾ (80%+)** - կրթական ծրագիր, որի կրթական բաղադրիչների նվազագույնը 80%-ն ուսանողը կուտակում է ԵՄՀ հեռավար ուսուցման նպատակով կիրառվող կրթական տեխնոլոգիաների միջոցով:
- **Առցանց դասընթաց (80%+)** - դասընթաց, որի լսարանային պարապմունքների նվազագույնը 80%-ն իրականացվում է ԵՄՀ հեռավար ուսուցման նպատակով կիրառվող կրթական տեխնոլոգիաների միջոցով:
- **Հիբրիդ ԿԾ (25%+)** - կրթական ծրագիր, որի կրթական բաղադրիչների նվազագույնը 25%-ը, բայց ոչ ավելին քան 75%-ը ուսանողը կուտակում է ԵՄՀ հեռավար ուսուցման նպատակով կիրառվող կրթական տեխնոլոգիաների միջոցով:

- **Հիբրիդ դասընթաց (25%+)** - դասընթաց որի լսարանային պարապմունքների նվազագույնը 25%-ը, բայց ոչ ավելին քան 75%-ը իրականացվում է ԵՄՀ հեռավար ուսուցման նպատակով կիրառվող կրթական տեխնոլոգիաների միջոցով:
- **Սինխրոն /Synchronous/ հեռավար ուսուցում** - տեղի է ունենում այն ժամանակ, երբ դասախոսը և ուսանողները փոխազդում են տարբեր վայրերում, բայց միևնույն ժամանակ (օր.՝ վիդեո և աուդիո կոնֆերանս, վեբ-սեմինար, օնլայն քննարկում և այլն):
- **Ասինխրոն /Asynchronous/ հեռավար ուսուցում** - տեղի է ունենում այն ժամանակ, երբ դասախոսը և ուսանողները փոխազդում են տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում (օր.՝ օնլայն ֆորումներ, դասախոսի կողմից ուսանողներին ուղարկված հանձնարարությունների կատարում և այլն):

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. ԵՄՀ ամբիոնները կարող են բակալավրական, մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրեր և առանձին դասընթացներ իրականացնել ոչ միայն օֆլայն, այլև առցանց կամ հիբրիդ տարբերակներով:

3.2. Կրթական և առարկայական ծրագրերի տարեկան վերանայման և տարեսկզբյան հաստատման ժամանակ անհրաժեշտ է հստակ ներկայացնել յուրաքանչյուրի մոտեցումը, ինչպես նաև իրականացման ողջ ընթացքում հետևել սույն ուղեցույցով սահմանվող պահանջներին և ցուցումներին:

3.3. Առցանց կամ հիբրիդ տարբերակներով կազմակերպվող դասընթացների հաստատման համար ամբիոնները պետք է ներկայացնեն նաև հստակ հիմնավորում այն մասին, որ և՛ այդ դասընթացների ուսանողները, և՛ դասախոսները ապահովված են համապատասխան ռեսուրսներով, ինչպես նաև տիրապետում են ԵՄՀ հեռավար ուսուցման նպատակով օգտագործվող կրթական տեխնոլոգիաների կիրառման նվազագույն պահանջներին:

3.4. Հեռավար ուսուցման տեխնոլոգիաները կարող են կիրառվել ինչպես բուն ուսումնական և գործնական պարապմունքների, այնպես էլ պաշտպանությունների և քննությունների իրականացման ժամանակ:

3.5. Արտակարգ դրության պայմաններում ամբողջ բուհի մոտեցումը կարող է վերանայվել և անցում կատարել ամբողջությամբ առցանց ուսուցման՝ Գիտական խորհրդի որոշմամբ:

4. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՐԹԱԿՆԵՐ

4.1. Սինխրոն և ասինխրոն եղանակներով հեռավար ուսուցման կազմակերպման նպատակով ԵՄՀ-ն կիրառում է Microsoft Teams հարթակը: Զուգահեռաբար ընդունելի է նաև այլ առցանց գործիքների և համակարգերի կիրառությունը:

4.2. Microsoft Teams-ը ճկուն, ժամանակակից և ապահով հարթակ է, որը ներառում է հեռավար ուսուցման կազմակերպման համապատասխան գործիքակազմ (հարթակի գործիքակազմը մանրամասն ներկայացված է հավելված 1-ում):

4.3. Այն ուսանողները և դասախոսները ովքեր ունեն հեռավար ուսուցման համար անհրաժեշտ սարքավորումների կամ ինտերնետային կապի խնդիր, նախքան դասընթացների մեկնարկը պետք է տեղեկացնեն այդ մասին համապատասխան ամբիոնին՝ վերջինիս կողմից բուհի ռեսուրսների և լսարանների օգտագործումը կազմակերպելու նպատակով:

4.4. Նախքան MS Teams-ի միջոցով դասընթացների կազմակերպումը **դասախոսներին անհրաժեշտ է՝**

- Վերապատրաստել կամ երաշխավորել ամբիոնի վարիչի կողմից, որ տիրապետում են հարթակի գործիքակազմին: Տրամադրել MS Teams հարթակի ԵՄՀ համար հասանելի հնարավորությունների փաթեթը և մանրամասնել անհրաժեշտության դեպքում (Հավելված 1);
- Տրամադրել կորպորատիվ էլ. հասցեներ, որով կկարողանան մուտք գործել համակարգ (name.surname@eiu.am);
- Իրազեկել ընթացիկ մոնիթորինգների, վճարման իրականացման համար հիմքերի ներկայացման նախապայմանների մասին և այլն:

4.5. Նախքան MS Teams-ի միջոցով դասընթացների կազմակերպումը **ուսանողներին անհրաժեշտ է՝**

- Վերապատրաստել, ծանոթացնել հարթակի գործիքակազմին և դրանց կիրառությանը (Հավելված 1), տրամադրել MS Teams հարթակի կիրառման ցուցումները (Հավելվա 2);
- Իրազեկել բացակայությունների վերահսկման, ընթացիկ և ամփոփիչ գնահատման մանրամասներին և այլն:

4.6. Հեռավար ուսուցման անցում կատարելիս և գործընթացի ողջ ընթացքում ամբիոնների և տեխնիկական աշխատակիցների կողմից դասախոսներին և ուսանողներին տրամադրվում է ՏՀՏ համակարգերից օգտվելու աջակցություն՝ ըստ անհրաժեշտության:

5. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5.1. Հեռավար ուսուցման եղանակով կազմակերպվող կրթական գործընթացի կողմերը պատասխանատվություն են կրում իրենց իրավասության շրջանակում:

5.2. **Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորը՝**

- Տեղայնացնում է ուսուցման մեջ նոր և բարձր տեխնոլոգիաների ներդրման գործընթացները;
- Համակարգում և վերահսկում է հեռավար ուսուցման ողջ գործընթացը բուհում, ռեկտորին ներկայացնում հաշվետվություններ;

- Հաստատում է ամբիոնների կողմից ներկայացված հեռավար ուսուցման գրաֆիկները, դասախոսների ծանրաբեռնվածության հաշվարկման փաստաթղթերը և այլն;
- Տրամադրում է խորհրդատվություն դասընթացների զարգացման, գործընթացի կազմակերպման շուրջ;
- Իրավասու է միանալ դասընթացներին՝ պատահական ստուգումների և հետագա խորհրդատվության նպատակով։

5.3. **Ամբիոնի վարիչը/ Կրթական ծրագրի պատասխանատուն՝**

- Համակարգում է ամբիոնի կրթական և առարկայական ծրագրերի մշակումն ու վերանայումը՝ հեռավար ուսուցման գործիքակազմի կիրառման շեշտադրումներով;
- Կազմակերպում է վերապատրաստումներ և փորձի փոխանակման հանդիպումներ ամբիոնի դասախոսների և ուսանողների համար՝ կրթական գործընթացը հեռավար ուսուցման հարթակի գործիքակազմով առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով;
- Մշակում է հեռավար ուսուցման գրաֆիկները, կատարում ուսումնական բեռնվածության բաշխում ամբիոնի հաստիքային աշխատողների, համատեղողների և ժամավճարային կարգով հրավիրվածների միջև, ներկայացնում Ուսումնամեթոդական գծով պրոռեկտորի հաստատմանը;
- Իրականացնում է պլանային և պատահական դասալսումներ՝ խնդիրների ժամանակին բացահայտման և շտկման նպատակով;
- Վերահսկում է հեռավար ուսուցման հարթակում իրականացվող դասերի իրականացմանը, անհրաժեշտ որոշումներ կայացնում չկայացած կամ անհրաժեշտ որակ չապահոված դասընթացների վերաբերյալ;
- Տրամադրում է անհատական/ խմբային խորհրդատվություն իր ենթակայությամբ աշխատող ամբիոնի աշխատակիցներին, դասախոսական կազմին և ուսանողներին՝ հեռավար ուսուցման գործընթացի շուրջ ծագած հարցերի վերաբերյալ;
- Գործընթացի վերաբերյալ ընթացիկ հաշվետվություններ և ուսման որակի բարձրացման ուղղությամբ առաջարկություններ է ներկայացնում Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորին։

5.4. **Ամբիոնի մեթոդիստը՝**

- Դասախոսներին և ուսանողներին տրամադրում է ՏՀՏ համակարգերից օգտվելու աջակցություն;
- Ապահովում է հարթակում դասընթացների սահուն և անխափան իրականացումը՝ ըստ նախապես հաստատված գրաֆիկների;

- Ապահովում է հեռավար իրականացվող միջանկյալ և վերջնական քննությունների անխափան իրականացումը, ամփոփում արդյունքները;
- Վերահսկում է ամենօրյա դասերի իրականացման ընթացքը, ուսանողների հաճախելիությունը և զեկուցում ամբիոնի վարիչին;
- Պատահական ստուգումներ է իրականացնում և զեկուցում ամբիոնի վարիչին հեռավար ուսուցման հարթակի կամ որևէ այլ խնդրի առկայության դեպքում;
- Իրականացնում է ամբիոնի վարիչի այլ ընթացիկ հանձնարարությունները:

5.5. **Դասախոսը՝**

- Մշակում և վերանայում է օֆլայն, օնլայն կամ հիբրիդ դասընթացների առարկայական ծրագրեր՝ հեռավար ուսուցման գործիքակազմի կիրառման շեշտադրումներով;
- Վարում է դասախոսություններ, գործնական պարապմունքներ, սեմինարներ հեռավար ուսուցման համար նախատեսված հարթակում;
- Կազմակերպում է սինխրոն (վեբ-սեմինար, օնլայն քննարկում) և ասինխրոն (ֆորումների, զրուցարանների միջոցով) քննարկումներ հեռավար ուսուցման հարթակում;
- Մշակում է անհատական և խմբային հանձնարարություններ հեռավար ուսուցման հարթակում (սինխրոն և ասինխրոն);
- Մշակում է դասընթացի ընթացիկ և ամփոփիչ գնահատման առցանց գործիքներ (անհրաժեշտության դեպքում դիմելով Որակի ապահովման կենտրոնի կամ ամբիոնի աջակցությանը);
- Պարբերաբար ապահովում է կառուցվածքային հետադարձ կապ՝ վերլուծելով իրականացրած հանձնարարությունների արդյունքները, ինչպես նաև իրազեկելով իրենց առաջընթացի և կատարելագործման քայլերի ուղղությամբ;
- Անհատական/ խմբային հանձնարարությունների կատարման համար նյութերի ձեռքբերման հարցում օժանդակություն է ցուցաբերում ուսանողներին;
- Արձագանքում է հարթակում կամ էլ. հասցեով ուսանողների կողմից ուղարկված հարցադրումներին;
- Իրականացնում է առցանց ներկա բացակա՝ ամբիոնի կողմից տրամադրված օնլայն փաստաթղթում, որին հետևում և պատահական ստուգումների միջոցով հաստատում է նաև մեթոդիստը;
- Մասնակցում է ամբիոնի կամ բուհի այլ ստորաբաժանման կողմից նախաձեռնած վերապատրաստման ծրագրերին;
- Ամբիոնի վարիչին ներկայացնում է հաշվետվություններ իրականացրած դասընթացների շուրջ (ըստ անհրաժեշտության);
- Իրականացնում է ամբիոնի կողմից ներկայացված այլ գործառույթներ:

5.6. **Ուսանողը՝**

- Մասնակցում է դասընթացներին՝ ամբիոնի կողմից մշակված ժամանակացույցին համաձայն;
- Իրականացնում է ամբիոնի կամ դասախոսների կողմից ներկայացված հանձնարարությունները/ առաջադրանքները;
- Մասնակցում է ամբիոնի կամ բուհի այլ ստորաբաժանման կողմից կազմակերպված վերապատրաստումներին և վարպետության դասերին;
- Որևէ խնդրի կամ դժգոհության դեպքում ժամանակին հայտնում է այդ մասին ամբիոնի կամ Որակի ապահովման կենտրոնի աշխատակիցներին:

6. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ

6.1. Առցանց դասընթացները իրականացվում են կիսամյակի համար հաստատված դասացուցակին համապատասխան՝ պահպանելով յուրաքանչյուր դասաժամի տևողությունը (80 րոպե):

6.2. Դասախոսները առցանց իրականացված դասընթացի համար վճարվում են ԵՄՀ դեմ առ դեմ ուսուցման համար սահմանված դրույքաչափերով՝ պահպանելով ամբողջական աշխատավարձը:

6.3. Վճարման իրականացման համար հիմք է հանդիսանում դասախոսի կողմից կենտրոնացված էլ. հասցեին (video.recording@eiu.am) ուղարկված տեսանյութի առկայությունը:

6.4. Իրականացված դասընթացի տեսանյութը անհրաժեշտ է ուղարկել 6.3 կետում նշված էլ. հասցեին դասընթացին հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում, նամակի վերնագրում նշելով անուն ազգանունը և դասընթացի անվանումը (օր.՝ Պողոս Պողոսյան/ Մարքեթինգի հիմունքներ):

7. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

7.1. Առցանց դասընթացներին տրվող կրեդիտների ներքին համամասնությունը կարելի է վերանայել՝ ավելի շատ ժամանակ տրամադրելով ուսանողների ինքնուրույն/ հետազոտական աշխատանքին, ընթացիկ և ամփոփիչ գնահատմանը, աջակցող խորհրդատվություններին՝ ապահովելով դասընթացների վերջնարդյունքների ձեռքբերումը ուսանողների կողմից:

7.2. Առցանց իրականացված դասընթացներին ուսանողների մասնակցությունը ևս համարվում է պարտադիր՝ դասընթացի ամփոփ գնահատման մեջ ներկայության բաղադրիչի կշիռը հաշվարկելով ԵՄՀ ուսանողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման կանոնակարգին համապատասխան:

7.3. Ընթացիկ (լսարանային և արտալսարանային աշխատանքներ) գնահատումները ևս իրականացվում են 7.2 կետում նշված կանոնակարգին համապատասխան: Անհրաժեշտությունից ելնելով մասնաբաժինները ընդհանուր գնահատման մեջ հնարավոր է վերանայել՝ հաշվի առնելով դասընթացի առանձնահատկությունները:

7.4. Առցանց կամ հիբրիդ դասընթացների դեպքում՝ միջանկյալ և վերջնական ստուգումները/ քննությունները հնարավոր է փոխարինել այլընտրանքային գնահատման մեթոդներով (Հավելված 3)՝ ամբիոնի և տվյալ դասընթացի դասախոսի որոշմամբ: Սակայն, այնուամենայնիվ, եթե ամբիոնը կամ դասախոսը ցանկանում են նույն կերպ կազմակերպել ստուգումները, ինչպես դեմ առ դեմ ուսուցման ժամանակ, ապա՝

7.4.1. Բոլոր քննությունները պետք է կազմակերպվեն ԵՄՀ Քննությունների կազմակերպման և անցկացման կարգի դրույթներին համապատասխան:

7.4.2. Գրավոր (բաց, փակ, կիսաբաց ֆորմատներով) քննությունները պետք է կազմակերպվեն MS Teams կամ MOODLE հարթակների քննությունների համար նախատեսված հատուկ գործիքների միջոցով, որոնք ԵՄՀ ներքին տեղեկատվական համակարգերն են և ապահովում են ուսանողների նույնականացումն ու քննության անխափան կազմակերպումը:

7.4.3. Բանավոր քննությունները պետք է կազմակերպվեն MS Teams հարթակի միջոցով՝ պարտադիր կերպով տեսաձայնագրելով ողջ գործընթացը:

7.5. Գնահատման այլընտրանքային մեթոդներ (Հավելված 3) ընտրելիս անհրաժեշտ է ապահովել դրանց համապատասխանությունը տվյալ դասընթացի ուսումնառության վերջնարդյունքներին և առանձնահատկություններին:

7.6. Գնահատման այլընտրանքային մեթոդներ կիրառելիս անհրաժեշտ է ունենալ գնահատման հստակ և օբյեկտիվ գործիքներ (անհրաժեշտության դեպքում՝ գնահատման գործիքները կարող են մշակվել Որակի ապահովման կենտրոնի աջակցությամբ), որոնք պետք է նախապես տրամադրված լինեն ուսանողներին:

7.7. Արտակարգ դրության պայմաններում, երբ հնարավոր չէ իրականացնել հիբրիդ դասընթացներ, անհրաժեշտ է վերապլանավորել դասընթացի ժամանակացույցը, դասընթացները բաժանելով հետևյալ խմբերի՝ (i) դասընթացներ, որ առանց որևէ խոչընդոտի կարելի է իրականացնել առցանց՝ ապահովելով սահմանված վերջնարդյունքների ձեռքբերումը ուսանողների կողմից, (ii) դասընթացներ, որ որոշակի փոփոխություններով (ժամանակացույցի վերանայմամբ, գնահատման մեթոդների վերափոխմամբ) հնարավոր է կազմակերպել առցանց և ապահովել վերջնարդյունքների ձեռքբերումը, (iii) դասընթացներ, որոնք մասնակիորեն է հնարավոր առցանց կերպով կազմակերպել և անհրաժեշտ է ամբողջությամբ կամ մասնակիորեն տեղափոխել հաջորդ կիսամյակ՝ լրացնելով դասավանդման, ուսումնառության և գնահատման հնարավոր բացերը և ապահովելով վերջնարդյունքների ձեռքբերումը:

7.8. Արտակարգ դրության պայմաններում պրակտիկաների իրականացումը և ամփոփումը, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորումը կարող են իրականացվել՝ ամբիոնների և որա-

կի ապահովման կենտրոնի կողմից համատեղ մշակված անցումային ռազմավարությամբ՝ ապահովելով սահմանցած վերջնարդյունքների ձեռքբերումը և գործընթացների արդյունավետությունն ու թափանցիկությունը:

8. ՈՐԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

8.1. Որակի ապահովման կենտրոնի ղեկավարը՝

- Իրավասու է միանալ ցանկացած դասընթացի՝ պլանային և պատահական ստուգումների իրականացման և հետագա խորհրդատվության նպատակով;
- Պարբերաբար իրականացնում է քանակական և որակական հետազոտություններ հեռավար ուսուցման կազմակերպման գործընթացի վերաբերյալ և արդյունքները հասանելի դարձնում պատասխանատուներին՝ նպաստելով արդյունավետ որոշումների կայացմանը և կառավարման արդյունավետության բարձրացմանը;
- Մշակում և վերամշակում է հեռավար ուսուցման գործընթացը կարգավորող ընթացակարգերը և գործիքակազմը՝ որպես ուղենիշ ունենալով որակի ապահովման ազգային և միջազգային չափանիշները;
- Ներկայացնում է առաջարկություններ ՏՀՏ նորարարական և ժամանակակից գործիքները կրթական գործընթացում կիրառելու և փորձնական ծրագրեր իրականացնելու շուրջ:

8.2. **Դասընթացի և դասախոսի գնահատում.**

8.2.1. Ինչպես նախատեսված է ԵՄՀ Ուսանողների կողմից դասախոսների գնահատման կարգում և Որակի ապահովման ուղեցույցում յուրաքանչյուր դասընթացի (այդ թվում՝ հիբրիդ և առցանց) դասավանդման որակը կիսամյակի ավարտին գնահատվում է ուսանողների կողմից:

8.2.2. Հեռավար հարթակում իրականացված դասընթացների դեպքում՝ հարցաշարում ներառվում են հարցադրումներ առցանց դասավանդման որակի և մատուցվող նյութի վերաբերյալ:

8.2.3. Գնահատման արդյունքները վերլուծության են ենթարկվում որակի ապահովման կենտրոնի կողմից, գնահատման անհատական արդյունքները ուղարկվում են դասախոսներին՝ առանձին-առանձին, իսկ ամբողջական փաթեթը՝ համապատասխան ամբիոնի վարիչին: Տվյալները կարող են դառնալ խմբային քննարկման առարկա միայն ընդհանրացված տեսքով՝ նպատակ ունենալով հզորացնելու դասախոսների մասնագիտական կարողությունները:

8.2.4. Գնահատման արդյունքները օգտագործվում են նաև դասախոսների ընդհանուր գնահատման սանդղակում, որտեղ ուսանողի կողմից դասախոսի գնահատականը կազմում է ընդհանուր ուսումնամեթոդական աշխատանքների գնահատականի 25%-ը:

8.3. **Կրթական ծրագրերի տարեկան և երկարաժամկետ գնահատում.**

8.3.1. Նոր առցանց/ հիբրիդ դասընթացները և կրթական ծրագրերը մշակվում են ԵՄՀ Կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման կարգի պահանջներով:

8.3.2. Կրթական ծրագրերի և դասընթացների (այդ թվում՝ առցանց և հիբրիդ) տարեկան և երկարաժամկետ գնահատումներն ու վերանայումները ևս իրականացվում են 8.3.1 կետում նշված կարգին համապատասխան:

8.4. **Ընթացիկ մոնիթորինգներ և գնահատումներ.**

8.4.1. Ընթացիկ մոնիթորինգներն ու գնահատումները նպատակ ունեն՝

- Գնահատել հեռավար ուսուցման կազմակերպման և իրականացման գործընթացները, բացահայտել բարելավման կարիք ունեցող ոլորտները և ներկայացնել կառավարման մարմիններին;
- Վերհանել շահակիցների կարիքները և բարձրացնել բավարարվածության մակարդակը:

8.4.2. Ընթացիկ ուսումնասիրություններն ու գնահատումները իրականացվում են Որակի ապահովման կենտրոնի և ամբիոնային գործակալների կողմից:

8.4.3. Ուսումնասիրությունները տարբերվում են ըստ նպատակահարմարության և կարող են ներառել և՛ քանակական (հիմնականում հարցումային հետազոտություններ), և՛ որակական (խորքային հարցազրույցներ, ֆոկուս խմբեր, դասալսումներ, փաստաթղթային ուսումնասիրություն և վերլուծություն և այլն) մեթոդներ:

9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Microsoft Teams հարթակի ԵՄՀ համար հասանելի հնարավորությունների փաթեթ[1]

ԿՐԹԱԿԱՆ հնարավորություններ	ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ/ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ հնարավորություններ
Անհատական/ խմբային տեսա և աուդիո զանգերի իրականացում /Video and Audio Call/	Հանդիպումների պլանավորում օնլայն օրացույցի միջոցով /Schedule Meetings/
Երկխոսության/ խմբային քննարկման հարթակ /Chat/	Մինչև 250 անձի հետ դասընթացի/ վիդեոկոնֆերանսի կազմակերպում
Էկրանը ցուցադրելու հնարավորություն /Screen Sharing/	Խմբեր, կուրսեր ստեղծելու և կառավարելու հնարավորություն /Create and Manage Groups/
Օնլայն գրատախտակի առկայություն /Whiteboard/	Բոլոր դասընթացների ձայնագրության և մեկ տեղում կուտակման հնարավորություն /Video Recording/
Ֆայլեր, նյութեր փոխանցելու, պահպանելու հնարավորություն /Files/	Բացակայություններին հետևելու, դասալսումների և մշտադիտարկումների իրականացման հնավարություններ
Ձայնային և տեքստային հաղորդագրություններ ուղարկելու հնարավորություն /Voicemails and Transcript/	Տարբեր օպերացիոն համակարգերի (Android, iOS/macOS, Microsoft) հավելվածների առկայություն
Անհատական և խմբային հանձնարարություններ տեղադրելու և ընթացքին հետևելու հնարավորություն /Assignments/	Հարթակում ֆայլեր տեղադրելու և պահպանելու համար /1 ՏԲ ծավալով/
Տարատեսակ քուիզերի ստեղծման, քննությունների կազմակերպման հնարավորություն /Quizzes/	OneDrive-ի միջոցով ֆայլերի պահպանման և փոխանցման անսահմանափակ հնարավորություններ
Ուսանողների առաջադիմությանը հետևելու և գնահատելու հնարավորություններ և գործիքներ /Gradebook/	MS Office փաթեթի ծրագրերի /word, excel, powerpoint etc./ օնլայն կիրառման/ խմբագրման հնարավորություն
	Office 365 այլ կրթական և կառավարչական հավելվածների ինտեգրման հնարավորություն /SharePoint Online, Yammer, Planner, Stream etc./

[1] Գործիքների մանրամասն ծանոթություն իրականացվում է վերապատրաստման միջոցով

Հավելված 2. Microsoft Teams հարթակի կիրառման ցուցումներ ուսանողների համար

ՆԱԽՔԱՆ առցանց դասընթացների մեկնարկը.

1. **Ներբեռնեք Microsoft Teams հարթակը**. https://teams.microsoft.com/downloads (հասանելի է տարբեր օպերացիոն համակարգերի համար /Android, iOS/macOS, Microsoft/);
2. **Մուտք գործեք Ձեր էլեկտրոնային հասցեով և գաղտնաբառով**;
3. **Նախնական ծանոթացեք համակարգի հնարավորություններին**՝ մինչև առցանց վերապատրաստում կիրականացվի ամբիոնի աշխատակիցների կողմից, ինքնուսուցումը խրախուսվում է;
4. **Ստուգեք դասընթացներին միացված լինելը.** համոզվեք, որ ներգրավված եք MS Teams-ի այն դասընթացներում, որոնք նախատեսված են գրաֆիկով: Կապ հաստատեք ամբիոնի մեթոդիստի հետ, եթե որևէ անճշտություն նկատեք:

ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԵԿՆԱՐԿԻՑ ՐՈՊԵՆԵՐ ԱՌԱՋ՝

5. **Հեռացրեք շեղող առարկաները.** Համոզվեք, որ հարմար և հանգիստ միջավայրում եք (հնարավորինս զերծ խանգարող հանգամանքներից և աղմուկից);
6. **Պատրաստեք անհրաժեշտ տեխնիկական միջոցները**. եթե համակարգչով կամ նոութբուքով եք նախատեսում միանալ դասընթացին պատրաստ ունեցեք Ձեզ մոտ բարձրախոս և խոսափող կամ ականջակալ (որն ապահովում է երկուսի համակցվածությունը);
7. **Ստուգեք ինտերնետային կապը**. համոզվեք, որ այն կայուն է և չի խոչընդոտի դասընթացի իրականացմանը;
8. **Մուտք գործեք MS Teams հարթակ դասընթացի մեկնարկից առնվազն 5 րոպե առաջ և սպասեք դասախոսի զանգին** (ուշանալու դեպքում սեղմեք "Միանալ"/ "Join" կոճակը և միացեք առանց այն ընդհատելու);
9. **Համոզվեք, որ վերբեռնել եք նախորդ դասի հանձնարարությունը** (առկայության դեպքում):

Առցանց դասընթացի ԸՆԹԱՑՔՈՒՄ.

1. **Միացեք դասընթացին անջատված խոսափողով**՝ սեղմելով լռել /mute/ կոճակը այնքան ժամանակ քանի դեռ այլ անձիք են խոսում, որպեսզի խուսափեք անիմաստ աղմուկից;
2. **Միացրեք տեսախցիկը.** միացված պահեք տեսախցիկն այնքան ժամանակ քանի դեռ ինտերնետային կապի հետ խնդիրներ չեն առաջանում;
3. **Հետևեք դասախոսի ցուցումներին** դասընթացի հետագա կազմակերպման համար:

Առցանց դասընթացից ՀԵՏՈ.

1. **Իրականացրեք տրված հանձնարարությունները** և վերբեռնեք “Հանձնարարություններ”/ “Assignments” հատվածում նախքան դրանց վերջնաժամկետը;
2. **Կապ պահպանեք դասախոսի հետ հանձնարարությունների իրականացման ընթացքում**՝ նախքան հաջորդ դասը (անհրաժեշտության դեպքում);
3. **Ուսումնասիրեք այլ առցանց գործիքներ**, որոնք կարող են էապես բարձրացնել Ձեր ուսումնառության արդյունավետությունը:

Հավելված 3. Գնահատման այլընտրանքային ընդունելի մոտեցումներ.

Անվանում	Նկարագրություն	Առավելություններն ու թերությունները
Բաց գրքի քննություն/ Open Book Exam	Բաց գրքի քննությունն իրականացվում է քննությունների կազմակերպման կանոններով, մի տարբերությամբ՝ հարցերին պատասխանելու համար ուսանողներին թույլատրվում է օգտագործել դասագրքերը և այլ նյութերը: Քննության համար հարցերը կազմելիս անհրաժեշտ է ներառել այնպիսի հարցեր/ առաջադրանքներ, որոնք ոչ միայն կգնահատեն թե որքանով է ուսանողը յուրացրել առարկան, այլև տարբեր իրավիճակներում այդ գիտելիքները կիրառելու ունակությունը (հարցերը պետք է լինեն վերլուծական/ տրամաբանական):	**Առավելություններ.** • Նպաստում է քննադատական, վերլուծական մտածողության զարգացմանը; • Շեշտադրվում է գիտելիքի կիրառությունը, այլ ոչ թե նյութը վերարտադրելը: **Սահմանափակումներ.** • Պլանավորելն ու համապատասխան հարցեր մշակելը կարող են ժամանակատար լինել; • Ոչ ճիշտ կազմակերպման դեպքում կարող է արհեստականորեն հեշտացնել/ իմաստազրկել քննությունը:
«Տնային» քննություն/ Take Home Exam	«Տնային» քննությունը՝ տնային առաջադրանքի և բաց գրքի քննության համադրությունն է: Այս դեպքում քննության հարցաշարը փոխանցվում է ուսանողներին կամ տեղադրվում հարթակում՝ համապատասխան հրահանգներով և վերջնաժամկետով (սովորաբար ոչ ավելի քան 24 ժամն է): Նպատակահարմար է կիրառել այնպիսի առաջադրանքների դեպքում, երբ ուսանողներին սովորականից երկար ժամանակ է անհրաժեշտ առաջադրանքները իրականացնելու համար (օր.՝ տարատեսակ մաթեմատիկական, ֆինանսական, վիճակագրական խնդիրների լուծում, վերլուծությունների իրականացում և այլն):	**Առավելություններ.** • Ժամանակային խիստ սահմանափակման բացակայությունը դասախոսներին հնարավորություն է տալիս առավել բարդ և երկար ժամանակ պահանջող առաջադրանքներ ներառել, իսկ ուսանողներին՝ ավելի շատ ժամանակ տրամադրել առաջադրանքների վերաբերյալ տեղեկություն որոնելու/ հետազոտելու, վերլուծելու վրա; • Նպաստում է փոխադարձ վստահության և համագործակցային մթնոլորտի ձևավորմանը: **Սահմանափակումներ.**

		• Ավելի քիչ կառավարելի է, գրեթե հնարավոր չէ վերահսկել ուսանողն ինքնուրույն է իրականացնում առաջադրանքները թե ոչ (կարելի է նվազեցնել ռիսկը առաջադրանքները տարբերակելու միջոցով):
Դեպքի ուսումնասիրություն և վերլուծություն/ Case Study	Դեպքի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, որպես գնահատման մեթոդ կիրառելիս ուսանողներին ներկայացվում են իրական կամ երևակայական իրավիճակներ (դեպքեր, օրինակներ), որոնց ուսումնասիրության, վերլուծության, եզրահանգումների և լուծման տարբերակների առաջադրման ուղղությամբ անհրաժեշտ է լինում տևական աշխատանք կատարել: Անհրաժեշտ է հստակ ներկայացնել առաջադրանքները և դրանց գնահատման կշիռները, ինչպես նաև ճիշտ հաշվարկել առաջադրանքների իրականացման համար պահանջվող աշխատաժամանակը:	**Առավելություններ.** • Ուսանողները իրենց գիտելիքների և փորձի հիման վրա վերլուծում են այլոց փորձառությունը, հիմնավորված եզրահանգումներ և առաջարկություններ անում; • Օգնում է ուսանողներին զարգացնելու վերլուծական, քննադատական, ստեղծագործական մտածողություն: **Սահմանափակումներ.** • Հայալեզու դեպքեր գտնելը կարող է խնդրահարույց լինել, իսկ օտար լեզուների ոչ բոլոր ուսանողներն են տիրապետում:
Քանակական կամ որակական վերլուծություններ/ Qualitative and Quantitative Analysis	Իրականացումը ենթադրում է տարբեր հիմնախնդիրներով վերլուծական/ հետազոտական աշխատանքների իրականացում՝ քանակական կամ որակական մեթոդների կիրառությամբ և տվյալների վերլուծություն: Կարելի է նաև ուսանողներին տրամադրել պատրաստի տվյալների բազաներ և խնդրել մեկնաբանել/ վերլուծել դրանք:	**Առավելություններ.** • Ուսանողների մոտ զարգացնում է հետազոտական հմտությունները, ինչպես նաև տվյալների հետ աշխատելու, դրանք վերլուծելու, եզրահանգումներ անելու կարողություն; • Նմանատիպ աշխատանքները հնարավորություն են տալիս բարձրացնել սովորողների ինքնուրույն աշխատանքի որակն ու պատասխանատվությունը: **Սահմանափակումներ.**

		• Կարճաժամկետ կտրվածքով հնարավոր է բարձր արդյունքներ չստացվեն:
Համագործակցային քննություն /Collaborative Testing/	Գնահատումը ենթադրում է քննական հարցաշարերի (սովորաբար փակ կամ կիսաբաց հարցերով) զույգերով կամ փոքր խմբերով իրականացում: Մոտեցումը հնարավորություն է տալիս ուսանողներին քննարկել նյութը, հիմնավորումներ ներկայացնել, ինչը նպաստում է տարբեր հմտությունների զարգացմանն ու նյութի առավել խորությամբ ուսումնասիրությանը: Հիմնականում կազմակերպվում են հետևյալ տարբերակներով՝ • Ուսանողներին թույլատրվում է քննարկել քննական հարցաշարը, սակայն յուրաքանչյուրն առանձին է ներկայացնում պատասխանները, պարտադիր չէ, որ խմբի բոլոր անդամները համաձայնության գան մեկ տարբերակի շուրջ; • Ուսանողների յուրաքանչյուր խմբի տրամադրվում է մեկական հարցատոմս, վերջիններս պետք է քննարկեն տարբերակները և համաձայնության գան պատասխանների շուրջ, արդյունքում՝ խմբի յուրաքանչյուր անդամ ստանում է նույն գնահատականը; • Երրորդ տարբերակը նախորդ երկուսի համադրությունն է. ուսանողները նախ՝ առանձին-առանձին են հանձնում քննությունը, ապա՝ խմբով (արդյունքում գնահատվում են և՛ անհատական, և՛ խմբային աշխատանքի համար):	**Առավելություններ.** • Ստեղծում է նպաստավոր պայմաններ սովորողների մոտ թիմային աշխատանքի, ներկայացնելու և բանակցելու հմտությունների զարգացման համար; • Բարձրացնում է ուսանող-ուսանող փոխհարաբերությունների արդյունավետությունը: **Սահմանափակումներ.** • Որոշ ուսանողներ հնարավոր է բավարար ժամանակ չծախսեն նյութի ուսումնասիրության վրա՝ իմանալով որ խմբի մյուս անդամների օգնությամբ կարող են անցնել քննությունը:

	Խմբային գնահատման դեպքում նախընտրելի է ավելի բարձր մակարդակի ճանաչողական առաջադրանքներ ներառել (կիրառել, վերլուծել, համադրել, գնահատել):	
Նախագծեր/ Projects	Այս դեպքում ուսումնառությունը կառուցում է նախագծերի շուրջ և հիմնված է սովորել-անելով սկզբունքի վրա, շեշտը դրվում է ոչ թե սովորածը վերարտադրելու, այլ նոր գիտելիք և հմտություններ ձեռք բերելու վրա: Նախագծային մեթոդի դեպքում դասընթացը պետք է ավարտվի իրական, գործնական արդյունքով և որևէ հիմնախնդրի լուծում պետք է պարունակի: Այս դեպքում փոխվում է ինչպես դասախոս-ուսանող, ուսանող-ուսանող հանդիպումների ֆորմատը, այնպես էլ ուսանողի և դասախոսի դերերը. ուսանողները ընտրում են հիմնախնդիրը, դրա լուծման տարբերակները, պլանավորում և նախագծում աշխատանքները, ինքնուրույն իրականացնում տեղեկատվության որոնում և հետազոտություններ և այլն: Դասախոսը հանդես է գալիս, որպես համակարգող, մենթոր և խորհրդատու: Արդյունքում քննության փոխարեն ուսանողը պաշտպանում է նախագիծը, որը զարգացրել է դասընթացի ընթացքում: Գիտելիքը կյանքի կոչելու, այլ դասընթացներից ստացած գիտելիքները և հմտությունները իրականում կիրառելու հնարավորություն է տալիս (հատկապես նպատակային է կիրառել ամփոփիչ դասընթացների /Capstone Courses/ համար):	**Առավելություններ.** • Զարգացնում է ուսանողների հետազոտական հմտությունները; • Նպաստում է արդյունավետ որոշումների կայացման և խնդիրների լուծման հմտությունների /Decision Making and Problem Solving Skills/ զարգացմանը; • Լուծվում են իրական կյանքին առնչվող խնդիրներ; • Բարձրացնում է սովորողի դերը ուսումնառության գործընթացում: **Սահմանափակումներ.** • Դասընթացը պետք է շատ լավ պլանավորված և կառավարելի լինի, գնահատման հստակ/ օբյեկտիվ մեխանիզմ և գործիքակազմ մշակված պետք է լինի; • Անհրաժեշտ է ապահովել անընդհատ կապ գործարար ոլորտի և դասընթացի միջև (օր.՝ դասախոսը կարող է նաև տվյալ ոլորտի պրակտիկ աշխատող լինել);

		• Դասավանդողը պետք է լրացուցիչ հմտություններ ունենա, որպեսզի կարողանա որպես խորհրդատու օժանդակել նախագծերի իրականացմանը:
Մշակումներ գիտական գրականությունից/ Literature Review	Ուսանողներին անհրաժեշտ է ներկայացնել հիմնախնդիրներ, հետազոտական թեմաներ (առավել ցանկալի է իրենց սեփական հետազոտության շրաջանակներում /դիպլոմային աշխատանք, թեզ/ իրականացնել) ուսումնասիրելու համար: Ուսանողներից պահանջվում է ներկայացնել թե ինչ տեսական մոտեցումներ կան հիմնախնդրի/դրան առնչվող թեմաների վերլուծություններում, հիմնախնդրի հետ կապված ինչ նախագծեր են իրականացվել, ինչ զեկույցներ են հրապարակվել: Անհրաժեշտ է վերլուծել թեմայի վերաբերյալ գիտական գրականությունը և իրականացված հետազոտությունները: Առաջադրանքն ավելի չափելի դարձնելու համար ցանկալի է ներառել հստակ պահանջներ, օր.՝ նվազագույնը քանի գիտական աղբյուրից պետք է օգտվեն, քանի միջազգային հոդվածի պետք է հղում տան և այլն:	**Առավելություններ.** • Զարգացնում է ուսանողների հետազոտական հմտությունները; • Նպաստում է քննադատական, վերլուծական մտածողության զարգացմանը: **Սահմանափակումներ.** • Հստակ պահանջներ, գնահատման ռուբրիկներ չներկայացնելու կամ քիչ ժամանակ տրամադրելու դեպքում, հնարավոր է արդյունքները գոհացնող չլինեն:
Հոդվածի կամ նյութի քննադատական վերլուծություն/ Critique	Հոդվածի կամ նյութի քննադատական վերլուծությունը ուսումնառության և գնահատման մեթոդների ամբողջություն է, որը նպաստում է ուսանողների կողմից այնպիսի վերջնարդյունքների ձեռբերմանը, ինչպիսիք են՝ քննադատական և վերլուծական մտածողությունը, փաստերի հիման վրա եզրակացություններ անելու կարողությունը և այլն:	**Առավելություններ.** • Զարգացնում է ուսանողների վերլուծական, քննադատական, ստեղծագործական մտածողությունը: **Սահմանափակումներ.**

	Ուսանողներին անհրաժեշտ է տրամադրել որևէ հոդված կամ այլ գիտական նյութ և առաջարկել իրականացնել քննադատական վերլուծություն: Անհրաժեշտ է տրամադրել նաև ձևաչափ, ուղղորդել թե ինչպես պետք է իրականացնեն, ներկայացնել գնահատման ռուբրիկները և այլն:	• Դիտարկվող հիմնախնդիրներին/ դասընթացի առանձնահատկություններին համապատասխան որակյալ հայալեզու հոդվածներ, նյութեր գտնելը կարող է ժամանակատար և բարդ լինել: